

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի հոկտեմբեր ամսվա նախադեպի ամփոփում

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է 2009թ. հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2009թ. հոկտեմբեր ամսվա նախադեպը:

Հաշտարարի գրասենյակը հոկտեմբեր ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ հիսուն բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող հիսուն բողոքներից տասնինը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են կամ անհատ ձեռներեցներ, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ):

Հաշտարարի քննությանը ենթակա երեսունմեկ բողոքներից հինգը հոկտեմբերին ստացվել են գրավոր տեսքով և ընդունվել են քննության, քսանվեց պահանջների քննությունը Հաշտարարի լիազորությունների շրջանակում են, սակայն հաճախորդները նախապես սահմանված կարգով իրենց բողոք-պահանջները չեն ներկայացրել ֆինանսական կազմակերպությանը: Գրասենյակի աշխատակիցներն օգնել են վերջիններիս ձևակերպել իրենց պահանջները և ներկայացնել ֆինանսական կազմակերպությանը: Նշյալ հաճախորդներից պահանջների քննության ընդունումը սպասվում է նոյեմբեր ամսին:

2009թ.-ի հոկտեմբեր ամսվա ընթացքում ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	50
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	31
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	19
1.2. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ	5
1.2.2 Կապված են վարկային պայմանագրերի հետ	3
1.2.4 Կապված են ապահովագրական հատուցման չվճարման հետ	2

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22, 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: info@fsm.am Web: www.fsm.am